

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

(Պ-278-12.09.2019-SSQP-011/0) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ԿԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՍ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՍ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
<p>ՀՀ Կառավարություն</p>	<p>Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի թիվ ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով</p> <p>8. Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի հրապարակումը իրականացվում է պետական լիազորված մարմնի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի հրապարակման միասնական կայքի միջոցով:</p>	<p>Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի թիվ ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասը.</p> <p>1) 8-րդ կետի «ծևաթղթերը» բառից հետո լրացնել «և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն» բառերը.</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետեր.</p> <p>«15) համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և/կամ դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),</p> <p>16) համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները,</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ընդունվել է</p>

		<p>17) համայնքում պետական և համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը:</p> <p>18) համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը»:</p> <p>«8. 20000 կամ ավել բնակիչ ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերն հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում, որը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ:»:</p>		
<p>«Վ Կառավարություն</p>	<p>Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում՝ անկախ</p>	<p>Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են բնակավայրի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար»:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Քննարկվել է</p>

	<p>բնակչության թվաքանակը, բնակիչների համար մատչելի և տեսանելի վայրերում:</p>			
<p>Մ. Գալստյան</p>	<p>Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:</p>	<p>Սույն օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը՝ 20000 կամ ավել բնակիչ ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում, որը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ: Դրույթը 2022 թվականի հունվարի 1-ից սկսում է տարածվել բոլոր համայնքների վրա՝ անկախ դրանց բնակչության թվից:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ընդունվել է</p>